

016  
7-36

ԱՅՐԱՊԵՏ  
ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տ 1000

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒՆՏՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԽՆԿՈՒ-ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

ՆՂԻՐՎՈՒՄ Է

ՄՆԵԳՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

# ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(1874 — 1962)

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

594  
h65

ԵՐԵՎԱՆ — 1974

Կարգեցիկ Ս. Գ. ԱՇԽԱՆՅԱՆ  
 Գ. Ա. ԱԴՅԱՆ  
 Խմբագրություն Ռ. Ա. ԻՆԿԱՆՅԱՆ

Составители: С. Г. Лалаханян  
 Г. А. Абян  
 Редактор Р. А. Ишханян

Министерство культуры Армянской ССР  
 Республиканская детская библиотек  
 им. Хико-Апера

К столетию со дня рождения

ԱՐԱՔԵՏ ԱՐԱՔԵՏՅԱՆ

(1874—1962)

БИБЛИОГРАФИЯ

Ереван, 1974



Ընդ շարժում էլ ես գրեցի  
 իմ արժեքի խնամքով,  
 Գրեցի ել, որ ժամի անցումով,  
 Մտե՛ք ուսման, անհանգստի:  
 Կ. Վարդանյան

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա մատենագիտությունը առաջին փորձն է, որ ամփոփում է Հայրապետ Հայրապետյանի գրական աշխատանքի տարբեր հրապարակումները, ինչպես և Էղած գրականությունը նրա մասին: Սույն մատենագիտությունը երկու զբլխավոր մաս ունի. ա) Հայրապետյանի ստեղծագործություններն ընդգրկող, որը հիմնական և առավել ծավալունն է, բ) Հ. Հայրապետյանի մասին Էղած գրականությունը ներկայացնող մաս:

Առաջինում ներկայացված են բանաստեղծի երկերի հրատարակությունները առանձին զրֆերով, ինչպես և նրանց հրապարակումները պարբերական մամուլում, դասագրքերում, ժողովածուներում: Այս բաժնում են ընդգրկված նաև Հ. Հայրապետյանի կազմած դասագրքերը, կատարած բարգմանություններն ու փոխադրությունները, նրա խոսքերով զբված երգերի ցանկը, ի վերջո նաև բանաստեղծի հողվածները:

Մատենագիտությունն ունի օժանդակ ցանկեր՝ ընդգրկված նյութերի վերնագրերի այրբենական ցանկ և անվանացանկ, որոնք կօգնեն օգտվողներին անհրաժեշտ նյութերը որոնելիս: Ցանկերում վերնագրերի և անձնանունների դիմաց նշված են մատենագիտության նյութերի համապատասխան համարները:

Մատենագիտությունը հավակնություն չունի լիակատար լինելու: Քեկ կազմողները ձգտել են նյութերի ընդգրկումը

հնարավորին շափ մտնեցնել լիակատարության, բայց կան նյութեր, որ տարբեր պատճառներով դուրս են մնացել: Մասնավորապես չեն ընդգրկված բանաստեղծի երկերի Հայաստանից դուրս կատարված հրատարակությունները:

Ներկա մատենագիտությունը սկսվում է Հ. Հայրապետյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ակնառկով և ասույթներով բանաստեղծի մասին:

Հայրապետ Հայրապետյանի երկերի ու երա մասին եղած գրականության այս մատենագիտությունը հեկո-Ապրտ անվան հանրապետական գրադարանը նվիրում է մանուկների շատ սիրելի բանաստեղծի ծննդյան 100-ամյակին:

Մատենագիտության այն բաժինները, որոնք ներկայացնում են Հ. Հայրապետյանի ստեղծագործությունները, բարգ-մանություններն ու փոխադրությունները առանձին գրքերով, պարբերական մամուլում ու ժողովածուներում, կազմել է գրականագետ Սոֆիկ Լալայանյանը, բանաստեղծի կազմած դասագրքերը, դասագրքերում ընդգրկված բոլոր նյութերը ներկայացնող բաժինները, ինչպես և օժանդակ ցանկերը կազմել է մատենագետ Պոլեցիկ Աղյանը:

Մատենագիտության վերաբերյալ բոլոր դիտողությունները խնդրվում է ուղարկել հեկո-Ապրտ անվան հանրապետական մանկական գրադարանի հասցեով՝ Երևան 1, Քումանյան 21:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԵՆՈՒ ԱՊՐՏ ԱՆՎԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

## ПРЕДИСЛОВИЕ

Настоящая библиография является первым опытом собрать воедино произведения Айрапетяна, а также имеющуюся литературу о нем. Библиография состоит из двух главных разделов: а) отражающего произведения А. Айрапетяна, б) охватывающего литературу об А. Айрапетяне. В первом разделе представлены произведения поэта, вышедшие в свет отдельными книгами, а также их публикации в периодической печати, учебниках, сборниках. В этом разделе указаны также учебники, составителем которых был А. Айрапетян, переводы и переложения, выполненные им, тексты песен, автором которых является поэт, и, наконец, его статьи.

Библиография имеет вспомогательные указатели: алфавитный указатель заглавий охваченного материала и указатель личных имен. Указатели помогут читателям в поисках необходимого им материала. В указателях рядом с названиями произведений и личными именами отмечаются соответствующие номера материалов библиографии.

Настоящая библиография не является исчерпывающей. Хотя составители стремились по возможности полно охватить материал, однако некоторые издания по разным причинам в ней не нашли места. В частности,

не указаны издания произведений поэта за пределами Армении.

Настоящую библиографию Республиканская библиотека им. Хико-Апера посвящает 100-летию со дня рождения поэта.

В библиографии раздел, охватывающий произведения А. Айрапетяна, изданные отдельными книгами, в периодической печати и сборниках, составила литературовед Софья Лалаханян. Раздел, в котором указаны учебники, составленные А. Айрапетяном, его произведения, изданные в учебниках и сборниках, а также два вспомогательных указателя составила библиограф Гегешик Адян.

Все замечания относительно библиографии просим направлять по адресу Республиканской библиотеки им. Хико-Апера: г. Ереван—1, ул. Туманяна, 21.

РЕСПУБЛИКАНСКАЯ ДЕТСКАЯ БИБЛИОТЕКА  
им. ХИКО-АПЕРА АРМ. ССР

## ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մտածելների սերն է եղել իմ սրտի մեջ,  
Ետանց մտածել եմ մտածել, գեղյ անվերջ:

Սովետահայ մանկական գրականության ականավոր երկրայացուցիչը Հայրապետ Հայրապետյանը իր երկարամյա կյանքի ամբողջ եռանդն անմնացորդ նվիրեց մանուկների դաստիարակման վեհ ու պատասխանատու գործին: Նշանավոր մանկագիրն անցել է կյանքի ու ստեղծագործության երկար, բովանդակալից ճանապարհ:

Հայրապետ Սարգսրի Հայրապետյանը ծնվել է 1874 թ. դեկտեմբերի մեկին Նախիջևանի Տանակերտ գյուղում, հողագործի ընտանիքում: Մանկության առաջին 10 տարին անց է կացրել գյուղում: Գրաճանաչ է դարձել տիրացու Գասպարի դպրոցում, որը գտնվում էր սեպցած սյուներով ընդարձակ հացատանը: Ծատ շանցած Հայրապետին ծնողները հորեզրոր հետ ուղարկում են Ջաբաթայա, որտեղ նա երկու տարի սովորում է տեղի ծխական դպրոցում: 14 տարեկան հասակում ընդունվում Քիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Պատանեկան ողջնչմամբ լի ուսման ծարավ սղան 5 տարի (1888—1893) ջանասիրաբար ուսանում է հայ մշակութի այս օջախում: Նա աշակերտում է անվանի գրողներ Պ. Պոռչյանին, Հ. Հովհաննիսյանին և երգվում է նրանց նման նվիրվել հայրենակիցներին լուսավորության վեհ գործին: Այնուհետև, գիտելիքներով զինված, Հայրապետյանը ոտք է դնում մանկավարժական

ասպարեզ, աշխտեղ եռանդով ծառայում 40 տարի մատաղ սերնդի մեջ արմատավորում զեղեցկի ու բարու սերմեր:

Մեղրիի, Սիսիանի, Մոզզոկի, Քուբայիսիի, Գերբենդի, Աստրախանի, Երևանի և այլ զբոսայտների սիրված մանկավարժը վաստակում է հայ մանուկների ու հասարակութան արժանի սերն ու համակրանքը:

«Դու ամբողջ կես դար անսպառ եռանդով, մանկական աշխուժով, սիրով և սրտով աշխատել ես քո հայ մանուկների կրթության վեհ գործի համար, անձնվեր աշխատել ես խոսքով և գրչով, սերունդներ ես դաստիարակել, բարձրացրել նրանց հոգին և զարգացրել նրանց միտքը»,—գրում է Ավ. Խահապյանը ավելացնելով, որ այս ամենին հրախառնակաբար «հայ աշակերտությունը և մանուկ սերունդը բերում է իր սերն ու խանդավառությունը իր հրախառնվորին, իր բանաստեղծին, իր շատ սիրելի ուսուցչին»:

Թեև Հայրապետյանի դրական առաջին փորձերը վերաբերում են ներսիսյան զբոսայտում ուսանելու տարիներին, սակայն զրազան հատուկացումը կապվում է մանկական «Հասկեր» ամսագրի հետ, որի էջերում նրա բանաստեղծական ձայնը դառնում է վստահ, պատկերները ինքնատիպ, խոսքը ներգործունե Ֆայժ ծանոթ մանկան հոգեբանությունն ու բնավորությունը, էջնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից ու հետաքրքրություններից, նրանց մտածողության կոնկրետությունից և զգացմունքայնությունից, Հայրապետյանը ստեղծում է մի շարք զոլորիկ, գերազանցապես բնությունը պատկերող մանկական բանաստեղծություններ, որոնցից շատերը 1909 թ. սկսած տպագրվում են «Հասկեր»-ի էջերում: Գրանցից են՝ «Գարուն», «Ինչ սիրուն է», «Անցան», «Մայիս» և այլն:

Հայրենի բնությունը և տարվա եղանակները բազմերանգ ու վառվռուն գույներով երեխաներին ներկայացնող այս բանաստեղծությունները աչքի են բնկնում զարմանալի պարզությամբ, երևույթի ցայտուն բնութագրմամբ, կենդանությամբ: Այդպես չէ մի՞թե գարունը.



Հ. Հայրապետյանը 1895 թվականին:

Զուգվել է կրկին  
Անտառ ու այգի,  
Վշուժ է ուժգին  
Զուրբ գետակի:

«Գարուն»

կամ մայիսը.

Ճամփա ավեր, ծառեր ու խոտ,  
Մեր անուշիկ էջ հյուրին,  
Նա մայիսն է ցորոտ-շագոտ  
Ամիսների թագուհին:

«Մայիս»

Ինչ էլ նկարագրի նա, կենսալից ճաղկաբեր դարունը, թե «գեղեցիկ ու զով գիշերը պայծառ», բամուջ մեղմիկ օրորվող, «հնչվիկ ու նագիկ» երգ մրմնջացող ծառերը սգաշտ ու այգի դեզին հաղցնող ծառ ու ծաղիկս մերկացնող աշունը, թե խտաշունչ ձմեռը, Հայրապետյանի պատկերը տեսանելի է, կոնկրետ, երբեմն էլ շնչավորված: Բնության նման ճշմարտացի, կենդանի պատկերները մշտապես հմայում են մանուկներին ճիշտ այնպես, ինչպես ինքն էր մանկուց հրապուրված հայրենի բնաշխարհի գեղեցիկության թուվչանքով:

«Մանուկ օրերիս,— գրել է նա,— վազվզելով զանուկների և ուլիկների ետևից տեսել եմ, թե ինչպես են թափվում աշունան տերևները, ինչպես են զարգարվում զարնան ծառերը, լսել եմ, թե ինչպես է խոխոզում առուն, ի՞նչ են երգում մեր սիրուն ձորի գիծ գետակն ու գեփյուղը: Ամռան գիշերներին կտրին պանկած, տեսել եմ, թե ինչպես են փայլում երկնքի աստղերը, ինչպես են ընկնում երկնքի ալբերը, այդ բոլորից երգեր եմ հյուսել ու տվել մանուկներին»:

Հայրենասիրական շերտ զգացմամբ է ներթափանցված «Եմ աշխարհի գարունը» բանաստեղծությունը.

Ես իմ աշխարհի  
Գարունը կուզեմ  
Զգարթ ու վեճմ,  
Գետակը փրփուր,  
Մեր սիրուն ձորի  
Զեփյունն է քեզուշ,  
Արևն անուշ...  
Ախ, իմ աշխարհի  
Հափքերը կայտառ,  
Մաղիկը պայծառ,  
Ես իմ աշխարհի  
Գարունն եմ կորոտ:  
Անուշ ու հոտոտ:

Համոզված, որ հաջողված մանկակուն երկը բարձրացնում է երիտանկերի իմացությունը, բանաստեղծը նախ ընդարձակում է փորրիկի ճանաչողությունը, այսպ անցնում կրտ դիտողականության և ընկալման ստուգմանը: Վերջին նպատակին են ծառայում հատկապես կենդանիներին ու թռչուններին նվիրված հանելուկ բանաստեղծությունները («Ի՞նչ թռչուններ են», «Ճանաչում եք մեզ»: Ահա մի քանի օրինակ.

Մի թռչուն կա լույսով կուր,  
Զայն է հասում նա տխուր,  
Որս է անում գիշերով,  
Իր ստակալի ճանկերով:

Կենդանի է վարների,  
Քնքուշ ու թանկ մորթ ունի,  
Ինքը ազատ, բարամտնիկ,  
Թույնը ունի հազար ծակ:

Մի թռչուն կա կողման,  
Զգուշ է զողի նման,  
Գիշտախ է, անկուտու,  
Մարդիկ նրան շնն սիրում:

Ճանկանալով խոստափել միտրիակեությանց, հեղինակը միշտ չէ, որ մանկան է փողովում կոսհոմը: Երբեմն հարցումին հաշորդում է եզրահանգումը կամ պատասխանը: Ստացվում է ուսուցողական աշխույժ գրույց.

— Ես մանուկ եմ ծաղկավետ,  
Զգեստեներս հոտավետ,  
Դեմքս պայծառ, ժպտերես,  
Անքք, տնեկեմ, ո՞վ եմ ես:  
— Դու գարունն ես ցանկալի,  
Սիրուն երգես աշխարհի,  
Բերում ես վարդ, մանուշակ,  
Լևիկով երգեր ու փոշնակ:

«Զորս եզունակ»

Քարմություն բերող այս ձևը զերմությամբ ընդունվեց մանուկների կողմից:

Նախաստեղծական շրջանի քնարի մի շարք ստեղծագործությունների նպատակն էլ մանուկների բնավորության ձևավորումն է, երեխայի մեջ զեղեցիկ ու ազնիվ հատկանիշների մշակումը: Սրան են ծառայում բանաստեղծի թե ինքնուրույն («Սուրիկն ու փիսիկը», «Նոր տարվա նվերը») և թե թարգմանական («Պիեչչի և «Մայրն ու մանուկը», Դմիտրին «Էլավ ընկեր») բանաստեղծությունների, ինչպես այն փոքրաթիվ առակաները, որոնք մի մասը կոխովյան սյուժեների մշակումներ են: Երբեմն Հայրապետյանը փոքրիկին զրականը բմբռնել է տալիս հարեանցիորեն ավաճ ուրիշ խոսքով: Այսպես, երեխաներին մրցելի փոխարեն զիբբ նվեր բերած նոր տարվա միջոցով հաստատում է գրքի և ուսման կարևորությունը: Հիշենք «Նոր տարվա նվերը» բանաստեղծություն հետևյալ տողերը.

— Ջան, մանուկներ,  
Թող ձեզ մրգեր  
Մայրիկը տա,  
Ինձ մտ չկա:

Ես ձեզ համար  
Մի-մի հարմար  
Գրքք եմ բերել  
Մեքը պատկեր:

Սրտ հման  
Ուրիշ մի բան  
էլ չգտա  
Իբրև բնձա:

Գրքք է տալիս  
Մտքեր բարի,  
Երգ, ցեծություն,  
Քաղեր սիրուն:

Երբեմն հեղինակը կենսական փաստից արված ընդհանրացումը ինքն է շեշտում, որպեսզի այն չվրիպի փոքրիկի ուշադրությունից: Այսպիսին է «Էլավ ընկեր» բանաստեղծությունը: Դա մի զոդորիկ պատկեր է: Վայրի ծաղիկը ծագկեփելուց ընկնում է մեխակի մոտ և հոտավետ է դառնում: Հեղինակը վախենալով, որ եզրակացությունը կարող է վրիպել, ուղղակի նշում է, որ եթե լավ ընկեր ունենաք, խելոք ու բարի կզառնաք: Հենց բարոյական բարձր հատկանիշներ մշակելն էլ կազմում է նրա առականի նպատակը, որոնք կշտմբանք են առաջացնում մարդու սովորոտ կողմերի՝ շատախոսություն, Զերուստիյան, մեծամտություն և այլն: Ես չեմ ունի պ ու ամբացնում գրականը: («Կաշաղակն ու ազաղը», «Կռուկն ու սաղը», «Շունն ու ձին», «Փռուսնը» և այլն): Թեև նախաստեղծական շրջանում Հայրապետյանի փորձը առակի նախադավառում հաջողություն է ավարտվում, բայց շատ լանցած թողնում է այդ ժանրը և անցնում իր տարերբին՝ բանաստեղծությունը:

1914—1917 թթ. իրադարձությունները՝ առաջին իմպերիալիստական պատերազմը, հայ ժողովրդի արհամարիքը,



2. Հայրապետյանը բնասերի հետ

հեղափոխության նախապատրաստումը, բանակ ղորակույզված բանաստեղծի վրա ունենում են մեծ ազդեցություն, նրա հայացքը ծաղկազարդ կենսալից բնության պատկերներից շրջվում և խորամտությամբ է լինում հասարակական կյանքի մեջ:

Բնության պատկերը սկսում է առնչվել հասարակական կյանքի հետ: Աշխանային բամբին ժողովրդական վշտի ու ցավի երգեր է երգում, նա ուղմի. դաշտից բերում է «վիշտ ու հառաչանք սզավոր մայրերի ողբ ու տառապանք» («Քամու երգը»), իսկ աշխան պատկերը իր մեջ թանձրացնում է ծանոթ կյանքից վերապրած բանաստեղծի վիշտը: Հայրապետյանը գրում է.

Բայց, ա՛խ, թո տեսին  
Նայող շնաց,  
Գծաթք է շորս զին,  
Սարսափ, ավերած,  
Մեր հանգ ու դաշտն  
Արյունով ներկված,  
Մեր ծաղիկ կյանքերը  
Անմուտաղ մեռած:

«Աշխան երգը»

Եվ ահա նախկին «սփրուն» աշունը դառնում է «է՛յ, արյուն աշուն, է՛յ զուլում աշուն»: Սակայն ժողովրդի ողբերգական վիճակը բանաստեղծին չի տանում դեպի հուսալքություն: Կարևորն այն է, որ կյանքից ստացած դառը խորհրդանշանությունները մանկագրի մեջ գոյացնում են ձգտում դեպի լուսավոր գալիքը, որին նա սկսում է հավատալ ու սպասել:

«Մովափին» (1915 թ.) բանաստեղծության մեջ ալեկոծ ծովի այլաբանական պատկերով Հայրապետյանը որոշակի ներկայացնում է մարդկանց ազատության նկատմամբ ունեցած իր նվիրական երազանքը: Երբ կատաղած ու ալեկոծ ալիքներից հարցնում են, թե ինչ են կամենում, նրանք հաստատակամորեն պատասխանում են.

Փոթորկվում ենք մենք,  
Կովում անցողսդ,  
Մեծ ազատության,  
Լավ կյանքի համար:

Այստեղից էլ միանգամայն օրինաչափ էր ժողովրդի ծոցից կլամ, նրա վշտով համակված բանաստեղծի կողմից հոկտեմբերյան փոթորկի ընկալումն ու անվերապահ ընդունումը: Գոտեպնդված աշխարհաշեն իրադարձություններով, պայծառ լավատեսությամբ տնր մանկագիրը իր ժողովրդի և նրա սերնդի հետագա նախատաղիքը կապում է սովետական կարգերի հետ:

1917 թ. մարտին՝ Հակոբեմբերյան հեղափոխության նախօրեին, Հայրապետյանը գրում էիր «Փոթորիկ» բանաստեղծությունը, որը նրա գիտակցության հասունության փայլուն վկայագիրն է: Բանաստեղծը նշմարելով չլուստիսից սկզբող փոթորիկը, սրտի բերկերանքով է դիմավորում դա.

Գու լամն ես փոթորիկը  
Լայնածավալ Հյուսիսի,  
Այդ հսկան է շարժվում սեղից,  
Հիմի կենի, կտտի:

Գրե՛ս աղբյուր ինչ է բերում  
Փոթորիկը մայիսին,  
Մեր սանդակքին վերջ է բերում,  
Մեր կարգը թանկագին:

Հայրապետյանի պատմական ճիշտ կողմնորոշումը հաստատող այդ բանաստեղծությանը շատ շանցած հաղորդում է օԱրծիվ առակը, ուր ալլաբանորեն ներկայացնում է ցարիզմի կործանումը և չեղմորեն ողջունում պատմական այդ գեղեցիկ Առակում արժիքը խորհրդանշում է ցարական դատան բանակալությունը, որի լուծը առանձնապես ծանր էր փոքր ժողովուրդների համար: Նրանից սարսափած թուշուհները, ի վերջը ըմբռնում են, որ դաշտերն ու անտառները բոլորի սեփականությունն են, իսկ բնությունն էլ ծաղկում է բոլորի համար: Այս գիտակցությունն էլ վճռականություն հաղորդելով նրանց, բարձրացնում է անհամար «վշտեր ու ցավեր» պատճառած արժիկ դեմ պայքարի, թուշուհները փակում են արժիկն ձազերի հետ իր սրբում և ոշնացնում: Հաստատվում է ազատություն, հավասարություն, հեղափոխություն:

Բանաստեղծի նվիրական երազանքի իրականացումը լուսավոր շրջան բացեց նրա ստեղծագործական կյանքում: Զինմորեն ողջունելով նորը, Հայրապետյանը դարձավ ազա-

նագրված ժողովրդի հերոսական իրականության և երջանիկ մտայն սերնդի անկաշառ ու խանդավառ կրգիչը: Սոցիալիստական նոր իրականությունը, Կարմիր բանակի շարքերում Հայրենիքի համար մարանչելը ողջնչեցին պոետին. երա մոտ հանգես բերին մինչ այդ շտեմված մի հատկություն՝ գրող-բաղաբացու ախրիվություն:

Պատմական իրադարձությունները նրա գրիչը բեղուն պարձնելու հետ մեկտեղ, փոխեցին նաև արտահայտչամեթոդը, թեմաները: Այժմ նրա ստեղծագործություններն օրդանապես կապվեցին սովետական իրականության հետ: Ազատ և ուրախ կյանքն ու սոցիալիստական աշխատանքը, կենիի կերպարն ու Հայրենական պատերազմը, սովետական պարոջն ու պիտեերական ճամբարը, երջանիկ մանկությունն ու բնությունը կազմեցին Հայրապետյանի պոեզիայի ղլխավոր թեմաները: Սովետական շրջանում նրա ստեղծագործությունները շարափակվեցին միայն ամսագրի էջերում. դրանք հրատարակվեցին առանձին: Մի շարք մանկական գրքեր՝ «Մեր գետը», «Մեղուների կոմունան», «Ուրախ Հրայրը և սաղի սալը», «Սոլիտի համար», «Փնջիկ», «Եմ երգերը», «Ընտիր երկիր», «Նրկերի ժողովածու» (երկու հատորով) նրան մեծ ճանաչում բերեցին, իսկ բազմաթիվ երաժշտագրված բանաստեղծություններ՝ «Կենի պապին», «Անցան», «Ելլիլի աշկները», «Տունածառ», «Գիշերը» և շատ ուրիշներ, նրա առունը սիրելի գարձրի ամենափոքրիկների շրջանում ևս:

Սովետական կարգերի հաստատուից հետո Հայրապետյանը մշտապես հաստատվում է Նրևանում և մինչև կյանքի վերջին օրերը (1962 թ.) նվիրվում մանուկների դաստիարակության գործին: Թողնելով Հյուսիսային Կովկասը, նա 1924 թ. ուսուցչական աշխատանքի է անցնում նախ էջմիածնում, ապա 1927 թ. մինչև 1934 թ. Նրևանի ծ. Արամյանի, կրուպսկայաի և Մ. Գորկու անվան պարոջներում:

Մանկավարժական և գրական աշխատանքին զուգընթաց նա ակտիվորեն մասնակցում է մանկա-պատանեկան («Պիտեներ», «Պիտեներ ղեկ», «Կարմիր ծիլներ», «Հոկտեմբերիկ» «Պիտեներ կանչ») և մանկավարժական («Կոմունիստական լուսավորություն», «Սովետական դպրոց») պարբերականներին Առանձնապես զբաղի էր նրա աշխատանքը «Պիտեներ կանչ»-ին, որի գործունյա և ակտիվ աշխատակիցն է ևզ 1933—1955 թվականներին Այս մասին բանաստեղծը գրում է. «25 տարի աշխատեցի «Պիտեներ կանչ»-ի խմբագրություն սրանչլի միջավայրում, աշխատեցի այնքան, որ այբեր սկսեցին դավաճանել... Այն ժամանակ դառնացած սրտով արտասվալից աչքերով թողեցի հեռացա...»:

Պակաս նշանակալից չէր նրա աշխատանքը դասագրքեր ստեղծման գործում:

Երկար տարիներ լինելով տարրական դասարաններ փորձառու ուսուցիչ, Հայրապետյանը մենակ և հեղինակա կիցների հետ կազմում է մի շարք դասագրքեր, որոնցից և էր կազմածները առանց հեղինակակցի՝ Հայոց լեզվի այբբենարան ուսուցիչների 3-րդ դասարանի համար, Հայոց լեզու այբբենարան-ընթերցարան ոչ հայկական դպրոցներ երկրորդ դասարանի համար, Հայոց լեզվի ընթերցարան ադրբեջանական դպրոցների և ուսաց դպրոցների 4-րդ դասարանի համար. հեղինակների հետ կազմածները այբբենարան (հեղինակակից Ա. Ըուզուրյան), մայրենի լեզու ընթերցարան երրորդ դասարանի համար (հեղինակակի Ա. Մովսիսյան), մայրենի լեզվի ընթերցարան 4-րդ դասարանի համար (հեղինակակից Ս. Օհանյան), և ուրիշներ: Հայրապետյանը գրում է նաև մանկավարժական բնույթի հոդվածներ, ուր մեթոդական արժեքավոր ցուցումներ է տալի ուսուցիչներին («Մայրենի լեզվի ուսուցումն առաջին դասարանում», «Առաջին տարը», «Մեթոդական ցուցումները» արվել):



Հ. Հայրապետյանը «Պիտեներ կանչի» խմբագրությունում

Նրա դասագրքերը բավարարել են մասնատակի պահանջները և իրենց սրակով մի աստիճան բարձր են ևզել քանակական թվականների որոշ դասագրքերից: Սրա հետ միասին մասույի էշերում նա հանդես է գալիս հոդվածներով, բարձրացնում է մասնական գրականության ետ մնալու կամ հեռակարների խնդիրները, անդրադառնում «Գիրք», «Հանգիզու» կիտոնկարներին:

Պատակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել Հայրապետյանի ծառայությունները մատող սերնդի կոմունիստական դաստիարակության գործում: 1936 թ. փետրվարի 11-ին ստնում են նրա ծննդյան 60 և գրական-հասարակական գործունեության 25-ամյակի 100-ամյակի առթիվ:

բակիական զործուներու 40-ամյակը, 1950 թ. փետրվարի 29-ին նշում նրա ծննդյան 75-ամյակը:

Նույն տարին անվանի մանկագիր-մանկավարժին շնորհվում է Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում: Նա պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով և «Նշխատանքային արժույթյան համար» (1941—45 թթ.) մեդալով:

\* \* \*

Հարուստ ու բազմազան է Հայրապետյանի ստեղծագործությունն սովետական շրջանը: Հասարակական նոր իրավակարգը արմատապես փոխեց մանկագրի ստեղծագործության բովանդակությունը, նրա հետաքրքրությունները:

Հեղափոխության հաջորդած առաջին տարիները գրողի համար դարձան ինչ-որ շափով որոնման տարիներ: Նա մերթմամբ քանաստեղծություններ է նվիրում պատմական բախտորոշ իրադարձությանը, մերթմամբ փորձում թափանցել նոր կյանքի ոլորտները, իմաստավորում է շուրջը կատարվող աննախընթաց ներույթները:

Քսանական թվականների սկզբին բանաստեղծը իր ուժերը փորձում է գրաստուգրիչին բնագավառում:

1921—1924 թվականներին, դեռ Պլատիկորսկում ուսուցիչ եղած ժամանակ, Հայրապետյանը հայ գրողների որոշ նրկեր վեր է ածում պիեսների, դրանցից են Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» (1926 թ.), Հովհ. Թումանյանի «Քեֆ անողին բեֆ չի պակսի» հեքիաթը (որը 1926 թ. բեմադրվում է նրանում ուսուցչական թատերական խմբի կողմից), Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացիկները» (1922 թ.) և ուրիշներ: Այս Հայրապետյանը կատարում է թարգմանական

աշխատանք [Մոլոտովարիձի «Ղաչաղ Արսենը»] և ստեղծում «Նրագ» և «Ննամառում» (1923) օպերաները: Չնայած այս փորձերին Հ. Հայրապետյանի ստեղծագործական հիմնական սյուրսը սովետական շրջանում մնում է մանկական թեատրեգիայունը: Նրա գլխավոր թեման դառնում է մեր իրականությունը, հեքուսը՝ սովետական մանուկը, խնդիրը՝ դաստիարակությունը: Նրա պոեզիայի նախկին որոշ թախծալի տրամադրությունը աեղի է տալիս կենսուրախությունը: Մանկագիրը արգեն հանդես է բերում գրող-բազաբացու ակտիվություն և արձագանքում է կյանքի առաջդարձ խնդիրներին: Այսպես, բազաբացիական պատերազմից հետո աշխատակցելով Աստրախանի «Կարմիր բանվոր» և «Կարմիր փարոս» պարբերականներին, նա մեծ ոգեշնչությամբ ողջունում է պատմական բախտորոշ հեղաբեկումը:

Հետզհետե մանկագիրը Հոկտեմբերյան և Նոյեմբերյան տոներին նայում է մանկան հասակ հայացքով, հասարակական իրադարձությունը դարձնում պարզ, մատչելի Այսպիսին է «Հոկտեմբերը», ուր կենսուրախ մանուկները դասարանը զարդարելով գրոշակով ու պլակատով, դուռն են.

Այսօր արթն տունս ենք մենք  
Հոկտեմբերի տոնը մեծ,  
Որ կորանեց զահր ցարի,  
Ազատ օրեր բերեց մեզ:

«Նոյեմբերի 29-ը» բանաստեղծությամբ Հայրապետյանը իր հայացքը բեկնում է ազատագրված հայրենիքի վրա, նպատակ ունենալով երեխաներին տեսանելի դարձնել նորն ու նշանակալիցը. «Իմ հայրենիքը» բանաստեղծության մեջ նա բնութագրում է սովետական երկիրը.

Իմ հայրենիքն արև է, ուր մարգիկ  
Նոր կյանք են հրուակ զվե ու գեղեցիկ,  
Ապրում են անկախ, սիրով ու ազատ,  
Բոլորն էլ իրքս մտա ու հարգաատ:

Իմ հայրենիքն այն է, որ մարդիկ  
Ազրում են ինչպես մի մեծ բնասեփ.  
Չեն շահագործում, չեն նեղում իրար,  
Քրտերն են թափում նոր կյանքի համար:

Փրոզը ցանկանում է, որ երեխան մշտապես հիշի հայրենիքի համար մարտնչող խիզախ Չապաևին, քաջարի Չեկոմբարենիին, հերոսական Կարմիր բանակը, պիոներ Պավլիկ Մորոզովին. բանաստեղծությունների մի ամբողջարք է նվիրում նրանց, Աճա «Ողբույն բանակին» օտանալորը.

Յիշու՛յն բեզ, ոչնե՛ւյն  
Մեր հոր բանակ,  
Մեր հայրենիքի  
Դու արթուն պահակ:

Հերոսներ ունես  
Անհաջք, դուռքազուն,  
Փառքով դասակված  
Մարտի գաշտերում:

Առանձնահատուկ հմայրով օժտված սեղմ ու կուռ այս բանաստեղծությունը հայատնություն է ներշնչում մեր Կարմիր բանակի նկատմամբ: Հայրապետյանը շերտովյամբ ու սիրով է արտացոլում նոր հայրենիքի կյանքն ու մարդկային փոխհարաբերությունները: Այս ուղղությունում առանձնապես նրա գրչը բեղուն դարձավ երեսունական թվականներին [«Բամբակագույն գործարանում», «Մեր շինարարությունը», «Շչակի երգը», «Գարնանցում», «Հարվածային բրիգադա», «Կոլխովի համար», «Գարնանացան»]: Հայրապետյանը մանկանք սեսանելի է դարձնում նոր քաղաքի առօրյան, արդյունավետ աշխատանքը դրողում ու գործարանում և ցանկալի հանգիստը գեղեցիկ, նորակառույց սանրում:  
Հայրենիքի ստեղծագործ ներկան անհնար է առանց մարդկային նոր փոխհարաբերությունների: Եթե «Գարնանացան», «Հարվածային բրիգադ» բանաստեղծություններում պարզ, հասու, տողերով Հայրապետյանը մարդկանց աշխատանքն է

կերկայացնում, ապա «Կոլխովի համար» կամ «Անձնվեր պատանի» պոեմում պատկերում է կոմերիտական Արալի նոր հողերանուփյունը: Պոեմի բովանդակությունը բարդ չէ: Բնության արճավորք՝ կայծակը ոչնչացնում է պահակ, կոմերիտական Արալի տունը, բայց նա հասարակական պարտքի խոր գիտակցությամբ չի լքում պահակահետը: Արալի օրինակով ցույց է արվում հերոսականության ու հայրենասիրության ուրին:

Սովետական նոր կյանքը փոխեց մարդկանց կենցաղն ու հողերանուփյունը, կնոջը ազատարեց նախկին ստրկական վիճակից, դարձրեց նոր հասարակարգ կառուցող ակտիվ գործիչ: Այդ են արտահայտում Հայրապետյանի «Մարտի 8-ը», «Տատիկն ու Թոնիկը», «Մայրիկների մասին» բանաստեղծությունները: Աճա «Մարտի 8-ը», որտեղ սիրով և օգնելու պատրաստակամությամբ աղջիկը առաջարկում է մորը.

Վեր կաց գեռ մոտիցդ,  
Հոգ մի անի դու իսկի,  
Լավ կերակուր ես կսփեմ,  
Տունը մաքուր կարեմ...

Աճա և «Մայրիկների մասին» հանրածանոթ բանաստեղծությունը.

Հիմա բոլոր մայրիկները մեր երկրում  
Ամեն տեսակ աշխատանք են կատարում.  
Որբ բոլիչ, որբ հակի, գործավոր,  
Մեր հայրերեն, կորսյուններին հավասար:

Հայրապետյանի քնարի կարևոր լարերից մեկն էլ կազմում է լենինյան թեման, որին նա անդրադառնում է իր երկարամյա կյանքի բոլոր շրջաններում: Այս մշտադալար թեման միշտ խանցողալուծությամբ է հնչեցրել բանաստեղծը: Խորմուսատու ու զեղեցիկ են լենինի մեծ գործի անմահությունն հաստատող «Իլյիչի աշիկները» բանաստեղծությունը.

Էլեկտրական լույսերը վառ,  
Որ փայլում են արեպես պայծառ,  
Անչիններն են մեր Իլյիչի,  
Նրանք կորեք էլ չեն հանգիս:

Աչքերի և պայծառ լույսերի համեմատությամբ հեղինակը  
կերկայացնում է լենինյան անձա՝ գործի պայծառ ու հա-  
վերժ լինելը:

Հեղինակի նպատակը չի ամփոփվում առաջնորդի նկատ-  
մամբ միայն անհուն սեր առաջացնելու ցանկությամբ: Նա  
լենինի օրինակով մատաղ սերնդին ներշնչում է մարդկային  
լավագույն հատկանիշներ: Ահա թե ինչու դիմում է նրա  
մանկությանը. չէ՞ որ դա ավելի արտամտ է փորրիկին: «Լե-  
նին պայինս սահուն ու հնչող բանաստեղծության տողերից  
պարզվում է, որ մանուկ լենինը եղել է նույնքան աշխույժ ու  
ժիր, խաղով ու թիֆեռով, ծաղկով ու երգով հրապուրվող  
տղա:

Այդ ստեղծագործության նպատակը միայն լենինի բնորոշ  
գծերի թվարկումը չէ, որանց մեկնակետը, հետևապես և  
դաստիարակչական էությունը երևում է վերջին տողերում.

Բայց խաղ ու պարծոց,  
մահափ, թիֆեռոց,  
երգից առավել  
Ուսումն է սիրել:

«Լենին պային»

Հենց այստեղ է, որ գրողը փորրիկ ականջին կարծես  
մեղմորեն ասում է, թե ինչպիսին պետք է լինի մարդը ժա-  
մանակի հետ փոխվում են մեծ առաջնորդի հետ երեխային  
մերձեցնելու դրույի հնարանները:

Քառասունական թվականներին վերադառնալով նույն թե-  
մային («Լենին», 1945 թ.), բանաստեղծը դաստիարակության  
միջոց է դարձնում լենինյան պատգամները, և դրանցով ցան-  
կանում բացահայտել այն լուսավորը, ինչ բնորոշ պետք է  
լինի դպրոցականին՝ սովորել, հարգել մեծերին, լինել ճշտա-  
պահ, խելոք, կարգապահ: Բանաստեղծության խոսքը շնչառ-  
կի է, նպատակասլաց, մանավանդ, որ հնչում է մանկան  
շուրթերից, որը անկեղծություն հաղորդելով, ներգործուն է  
դարձնում իմաստը:

Դու առել ես մեզ,  
Որ յով սովորենք,  
Մեզեից մեծերին  
Սիրենք ու հարգենք:

Ամեն գործի մեջ  
Իննենք ճշտապահ,  
Տառք, թե գրում  
Կելքք, կարգապահ:

Քո ասածները,  
Կատարում ենք հիշւմ,  
Կով սեզ միշտ հիշում,  
Սեր մեծ ուսուցիչ:

Լենինյան թեման նոր, թարմ լուսարևություն է ստանում  
իտունական թվականներին: Այստեղ առաջնորդի կերպարը  
կերկայացվում է բնության ֆունի վրա: «Լենինի ծնունդը»  
(1952) ռոտանավորում կենսաբեր դարձան ներշնչուն պատկե-  
րին հաջորդում է արևի դիմումը.

Վերջից իմացն՝  
Որ ևրկբացնում  
Լույս-մանուկ մեզից:

Եկեք մենք նրան՝  
Այն լույս-մանուկին,  
Մեր նվերը տանք,  
Նվեր թանկագին:

Նվ անհա բնությունը սիրով նորածին մանուկին պարզեում  
է ամենագեղեցիկը՝ արևի ջրլքը, որ նա պայծառ լինի, ծա-  
ղիկների բույրը, որ խոհեմ լինի, արձվի թևերը, որ անվեհեր  
լինի, լեռների հիմքը, որ անասան լինի: Մեծանում է բնու-  
թյան կենսաբեր ուժերը բովանդակող «Լույս մանուկը», հզո-  
րանում և զանում:

Աշխատավոր,  
Անհիվ մարդկանց  
Ղեկավար,  
Ողջ աշխարհում  
Հավերժական  
Խաղաղության  
Նամավոր:

Մրանից մի փոքր տարբեր է 1955 թվականին գրած «Իլ-լիշը» բանաստեղծությունը, որտեղ հանճարի ծննդյան և բնության գարթոնքի միջև հնդինանը կրկին անբավտելի կապ է նկատում:

Նա աշխարհ եկավ  
Պատժառ ապրիլին,  
Երբ որ գարունն էր  
Տիրում աշխարհին,  
Ինքն էլ գարունն էր՝  
Նոր կյանքի գարուն,  
Ու գարուն գրեց  
Մարդկանց սրտերում:

Կրկնվող գարուն բառը այստեղ շեշտակի է դարձնում Լենինի շնորհիվ մարդկությունը նոր կյանք պարզեցնում ամաստը:

Հայրապետյանի բուրբ շրջանների ստեղծագործությունների հիմնական մեկնակետը՝ սերն է ղեպի մանկական աշխարհը, գլխավոր հերոսը՝ մանուկը, գերազանցապես նախադրոցականը կամ գրաճանաչ դարձած աշակերտը, իսկ առաջնահերթ խնդիրը նրա դաստիարակությունը: Հայրապետյանը մատաղ սերնդի հետ անցնում է մեր երկրի զարգացման տարբեր շրջաններով:

Սովետական իշխանության առաջին տասնամյակից գրողը մտահոգվում է անսպաստանության վերացման հարցով, պահանջում է ավելի մեծ ուշադրություն մանուկների նկատմամբ, ավելի շատ մանկատներ ու մանկամտուրներ կառուցել: Նա ջանում է, որ փոքրիկ քաղաքացիների դաստիարա-

կությունն ընթանա ճիշտ ուղղությամբ, կազմակերպվի նրանց ստացումը, հանրօրոտ աշխատանքն ու հանգիստը, որպեսզի նրանք դառնան առույթ, կենսունակ, ուժեղ ու ակտիվ մարդիկ: Գրողը ոչ միայն անդրադառնում է ուսումնական տարվա ստաջին օրվան, առաջին դասին, դպրոցական ու ճամբարային կյանքին («Առաջին դաս», «Գնալի աշխատանք», «Ճամբարի ստավոտը», «Մեր գետնը և այլն»), այլև մեծ տեղ է հատկացնում մանկան զգացմունքների հղկմանը: Մանկան աշխարհը պետկով իրեն յուրահաստակ ու բազմազան բնավորությունների կոլեկտիվ, նա աշխատում է խոստիկ միօրինակությունից: Մի զեպրում ներկայացնում է երեխայի վարքագծի կոնկրետ տեսանելի պատկերը, նկարագրում փոս փորոզ, ծառ տնկող («Մտախոսել»), սարյակի բույն կառուցող («Սարյակի բույնը») զարոցին միջատ, քիթնա նվեր բերող աշակերտների («Առաջին դաս»), մյուս զեպրում խոսքը տալիս է աշակերտին («Բրիգադիր») նրա մտորումների միջոցով կասկացնում լավը:

Ամբողջ սարգա ընթացքում  
Չունեմ ոչ մի ուշացում

Դասի ժամին միշտ լսում  
Այխառում եմ հյուսնոցում:

մի այլ զեպրում էլ դառնում է փոքրիկի խորհրդատուն:

Կրկին դպրոց գնալու մենք,  
Սովորենք ու աշխատենք,  
Այխատանքն է, որ մարզուն  
Ե՛վ կրթում է, և՛ մարզում:

«Գնալ աշխատանք»

Մերթ պատկերում է մանուկների աշխույժ դրույցը «Առաջին դաս»-ում:

— Որտե՞ղ էիր դու այս ամառ,—  
Հարցնում էին նրանք իրար—  
— Ծա եղև եմ Մոզգառուում,  
— Ես էլ՝ շքաղ Լոռվա մտրում,

Նրբեմն էլ մանկագիրը թափանցում է ու լուսավորում փոքրիկ հոգին: Գեղեցիկ ու հոգեհարազատ է մանկան զուլայ սիրույց ձեռքով «Համալիկի նամակը», որտեղ դրանանաչ գտնուելու բերկրանքը նրբահայտվում է տատի հանդեպ տաժամած ազգիս սիրո հետ: Բանաստեղծության խոսքը անկաշկանեղ է, քնական:

Իմ լավ տատի, սեռույ տատի,  
 Գարտեկ եմ անսահման,  
 Ինչ կինի գիրս կարգաս,  
 Վեր կենես դաս երևան:

Նոգերանական մեծ նրբանկատություն է բացահայտում մանկագիրը երեխայի հոգին, նրա զինչ ու պայծառ աչքերով նայում աշխարհին: Նա լավ գիտե մանկապարտեղի ասն կամ գորոցի շեմերը ոտք դրած հերոսին: «Գուրդեհիկը, Արան ու Էս» ստանավորում նկարագրում է նրանց առօրյան:

Չենք ազմուտ նաչի ժամին,  
 Այլ հսկում ենք փոքրիկներին,  
 Ուտամ ենք լուս մեծերի պնս,  
 Գուրդեհիկը, Արան ու Էս...

Արդիականության զգացողության տեղ գրողը մշտապես արձագանքում է ժամանակի հուզող հարցերին: Հատկապես Հայրենական պատերազմի շրջանում նրա ընտրը հարստանում է ես մի կարևոր թեմայով: Քայլերով կյանքին համընթաց, երեխաներին համակելով Հայրենիքի սիրով, ոգեշնչում էր հայրենիքի համար մարտնչելու պատրաստականություն ե հողթմանակի հավատ: Այս շրջանում նրա սիրամ ժանրը դառնում է պոեմը, որպես կյանքի ընդգրկման ավելի լայն հնարավորություններ տվող տեսակ:

Հայրապետյանի պոեմների հիմնական հերոսը դառնում է իր գործն իբրև սովորական պարտականություն կատարող պիտեերը, պատանին, որին Հայրենական պատերազմը հաստանացնում է և մղում հերոսության: Լեդիեակը անդրադառնում



Հ. Հայրապետյանի երեխաների հետ

է ոչ միայն սովետական մանուկներին և պատանիներին հերոսութեան նկարագրութեանը ֆաշիստական շտաբի ոչնչացումը («Երգ պիտոնների մասին»), զնդի դրոշմ ֆաշիստներից թարցրելու հերոսական արարքը («Կոստյա Կրավչուկ»), թշնամու հրակետ դարձած սեփական տան հրկիզումը («Պոեմ փոքրիկ Ետրայի մասին»), 15 վերավորներին այրվող ավտոմեքենայից փրկելը («Կոմերիտուհի թամարան»), այլ և բացահայտում նրանց հողերանությունը, որը հայրենասեր պատանիներին մղում է անձնազոհության: Այսպես, զնդի դրոշմ թշնամուց թարցրելու հանձնարարությունը սրբությունը կատարող հայրենասեր Կոստյա Կրավչուկը հաստատական է զգույշ, խելացի: Տաղանգում է նրա հոգին, դրոշմ սկզբում քարի տակ, ապա շրհորում թարցրելիս, բայց հրքեք ոչ մեկին չի հայտնում: Հեղինակը համոզվել է պատկերում աղնիվ հերոս պիտոնների հուզմունքը, երբ նա մեր հաղթանակից հետո դրոշմ քաղաքի պարեպին է հանձնում և ըստ արժանվույթի դնահատվում:

*Քս արածք, որպես փառքի ոսկե էջ,  
Միտ կմեա պատերազմի դրքի մեջ,—  
Այսպես ստաց ձեր պարեպը, խիտ հուզվեց,  
Տեղեք կու՛մ, պիտոնի համբուրեց:  
Հայրենիք էլ իբ հերոսի մեծարեց,  
Նրա կուրծք վառ նշանով զարդարեց:*

Հայրենասիրական վեհ նպատակն են հետպնդում պատմական անցյալին վերաբերող «Փայլ վահան», «Երկաթ լեռնցին» լեզվական գեղեցիկ ավանդությունը, ինչպես նաև նույնպատերազմյան տարիների խաղաղությանը նվիրված «Խաղաղություն», «Մեր ցանկությունը» և այլ ստեղծագործություններ: Այս բոլորի կողքին անհնար է չնկատել, որ Հայրապետ Հայրապետյանի վեց տասնամյակ հարատևող ստեղծագործական կյանքում մշտապես հնչող, սիրված թե՛ ման բնությունն է իր հրաշալիքներով ու բազմերանգ զույգ

ներով: Գրողը բնության պատկերը հաճախ զուգակցում է իր պայքարողների և դա համակող հուզականություն և հաղորդում նրանց:

*Այ ու արվան վառ մայիս,  
Գու ամենից լավ ամիս,  
Կյանք ու արև ես տալիս  
Ի՛նչ սիրուն ես, յան մայիս:*

«Մայիս»

*Ի՛նչ սիրուն ես  
Անգին աշուն,  
Քո կարտան եմ  
Ես միշտ բաշում:*

«Անգին աշուն»

*Հե՛յ ջան, անցան  
Քուռ ու բորան,  
Մե՛ն պապին  
Ջյունի հետ:*

«Անցան»

Հայրապետյանի քննադատներն էր ճշգրիտ են, հակիրճ: Երբեմն նրանք ցայտուն զոված պատկերներ են, որտեղ խոսքը զուսպ է, քնական: Հիշենք «Եղևիին».

*Չմե՛ն է, Բուր  
Մաները սուր  
Տխուր անտառում  
Գողում են, մրտում:  
Եղևին միայն  
Կանուզվ զուզված  
Կանգնել է ձմառն  
Ցուրտ թամ գիւնաց:*

Մականգաիրը խուսափում է շքեղ մակդիրներից, բայց սալի խանգարում, որ նա քննադատները հազեցնի տեսանելի, պոետիկ երանգներով:

Հայրապետյանի բնագատկերը տնջւում է մեր իրականութեան հետ («Ճամբարի առաջնորդ», «Մեր գեար», «Հրածնշտ», «Օգնում ենք», «Բամբակի դաշտում»), և ճանաչողական կամ ուսուցողական տարրեր է պարունակում («Մարտություն»): Պակաս արժեքավոր չեն կենդանական աշխարհը պատկերող ոտանավորները: Հիշենք «Երեք փոսիկի պատմությունը», որտեղ այնքան ցայտուն, զունեղ է պատկերը, որ մեկ անգամ կարգացողը միշտ կհիշի.

Մեր ու կատուն նազանի,  
Երեք փոքրիկ ձագ ունի,  
Մեկը՝ փափրիկ, սպիտակ,  
Կասե՛ս՝ փոքրիկ նապաստակ:  
Մեկը՝ սևիկ ու ճարպիկ,  
Գունչն ու պուշ գեղցրիկ,  
Մեկը՝ շալիճ համարակն,  
Արկնները՝ վառ հրադ:

Միայն չափածոյով չի սահմանափակվել Հ. Հայրապետյանի գրական գործը սովետական շրջանում: Երեսուներկան թվականներից մանկադիրք երևում է նաև գրական այլ տեսակների ու ժանրերի բնագծերում: Նա գրում է պատմվածքներ և արձակ հեքիաթներ: Պատմվածքը նորություն չէր Հայրապետյանի համար, դեռևս «Նախկին» ամսագրում նա հանդես էր եկել մի քանի պատմվածքներով («Փրփրիկ հիվանդացել է», «Սուրբիկի բնկները», «Մեր Գուշուշը», սակայն այդ մանրից նա հրատարակել էր իր տարբերը չճամբարելով: Երեսնամյան թվականներին գրողը վերստին անդրադարձավ պատմվածքին, արժարելով թեմատիկ երկու զի՛մ ախրանցյալի և նոր կյանքի նկարագրի («Կրթության իրավունք», «Ճանտոտերի բնարությունը», «Առաջին օրը դպրոցում», «Աշխատանքի իրավունքը», «Մաղկանոց», «Գիծ Մինասը», «Աշտոիկի ոտը», Մենք պիտենք ենք», «Սեփական ուժով» և այլն):

«Կրթության իրավունք» պատմվածքում հեղինակը ներկայացնում է խոհարարի բնօրինակ սողա Ռուրիկի ողբերգություն:

Եր մասնավոր սեփականատիրական աշխարհում, որտեղ մարդու գնահատության չափանիշը փողն էր և դիրքը: Աշխատավոր մարդու որդուն, որը ուսման մեծ տենջ ուներ և բնությունները փայլուն էր հանձնել, չեն բնորոշում գիմնադասման իր դասային պատկանելության պատճառով: Այս հանգամանքը հոգեկան խոր տվայտանք է առաջացնում Ռուրիկի մաս:

Համանման ողբերգություն է պատկերված «Աշխատանքի իրավունքը» պատմվածքում: Գրողը իր բնկեցողին ստիպում է խորասույն ցավել հոր մահից հետո կաշվի զործարանի փոքրիկ բանվորի՝ դպրոցի մասին երազող ութամյա Մարկոսի կործանման համար:

Հայրապետյանը ուսուցիչներին է պատկերում անցյալը, մեծ համոզականություններ հերկայացնում առաջին անգամ: Գրողը համախող մանկան հոգերանությունը վաղ արթնանալու, անճամբարությունը, սգոն ու դրաման ուսուցչի նկատմամբ առաջացած խոր հիասթափությունն ու ապրումները: Մանկության այս տպավորություններն էլ հետագայում դարձան «Նուշեր մանուկ օրերից» ինքնակենսագրական երկի շի՛րքը: Անցյալի պատկերներից տարբեր են արգիականությունը պատկերող պատմվածքները, որտեղ երեխայի բնավորությունը մեղավորման նպատակ են հետասույնում: Այստեղ, իրականում, անընթաց հենքի վրա կենդանազրկում են մեր սյունեկանային անընթաց հենքի վրա կենդանազրկում են մեր մանուկների գրական կամ քաղաքական կերպարները, ցայտուն է պիղծվում քաղաքացիական կամ քաղաքացիական կյանքի հիմնական շրջանները: Պարզ ու սահուն գրեթե անհնղու այս պատմվածքներում երազակցություն հանդեցողը կյանքի հիմնարկությունն է:

Այսպես, պիտենքների կողմից գտնված դրամով լի կապուցը արժողը՝ անձանոթ կողտեսնականի վերագարձնելը նկարագրելով, Հայրապետյանը ցանկանում է մանկան մեջ մշակել ազնվություն, անընթացիկություն («Մենք պիտենք ենք») կամ գյուղատնտեսի ղեկավարությունը դպրոցականները):

ների եռանդուն աշխատանքը ծաղկանոցում պատկերելով, սեր է արթնացնում աշխատանքի նկատմամբ («Մարդկանոց»)։ Նույն կերպ վանում է առաջացնում բացասականի նկատմամբ։ «Աշտտիկի ոտը» պատմվածքում Հեղինակը նկարագրում է մեծերին շտոգ, պիտեներական խոստումը շկատարող, փողոցի կարգ ու կանոնին անուշադիր Աշտտի վատ արարքը (տրամվայից թռչելու հեռանկարով ոտրից զրկվելը), իսկ «Շատերից մեկը» պատմվածքում միայն մաթեմատիկան սիրող ու գրականությունը մասնների արանքով նայող և հուշելու պատճառով հիմար վիճակի մեջ բնկած Աշտտի զավեշտական վիճակով կշտամբում է նրան. «Ինչու՞ եք ծիծաղում,—ասում է ուսուցիչը աշակերտներին,— որ ձեր դպրոցում այդպիսի աշակերտներ կան։ Իսկ դու, Աշտտ, այդպե՞ս պիտի շարունակես։ Մի պահ լուռ էր Աշտտը, ապա կամացուկ, բայց հաստատուն ձայնով ասաց. Այ՛ր Գասը շարունակվեց»։

Մանկան դատախարակման նպատակին Հայրուպետյանը ծառայեցնում է նաև հերթաթիւր։ Այս շրջանին են վերաբերում «հարված ծիտիկը», «ձծօտիկ ծիտիկը», «Երեք իմաստունների ու աղուծը», «Ինչպե՞ս շունը մարդուն բնկեր դարձավ», «Ինչու՞ ձագարի պոչը կարճ է, իսկ ականջները երկար» և այլն։ Մրանց հետադայում ավելացան «ձագարն ու աղվեսը», «Կոփն ու ձագարը», «Մնողասեր աղջիկը», «Խանն ու հովվիկը», «Արեգակի սարը» (խնայան), «Հարուստն ու բարակը» (չխտական), «Մայրական սեր (կորեական)», «Անհնազանդ ուրիկը» (մոնղոլական) և այլն։

Հայրուպետյանը նոր հերթաթ ստեղծելու փորձեր շկատարեց, ժամանակակից հերոսին շտոցրեց հերթաթային աշխարհ. բայց դրա փոխարեն զգալի զործ կատարեց այլ ծաղավորգների բանահայտության մշակման գործում։ Այս առումով էլ ավանդականի հունով ընթացող մանկագրի սյուժեներից շատերը թարմություն էին, որովհետև նրանց հիմնական աղբյուրը հեղիական, նեգրական, պարսկական, արաբական, ռուսական, գերմանական, թաթարական, ուղհական, չեխական, մոնղոլական բանահայտությունն էր։



Կերպարները բացահայտելով գործողության մեջ, հերթա-  
 փայլին հանգամանքներում, աշխուժժ երկախուսություններով,  
 Հայրապետյանը բարձրացնում է հայրենասիրության («Հաս-  
 ցր») ու աշխատասիրության («Երեք ընկեր») համերաշխու-  
 րության ու ընկերասիրության («Երեք ընկեր») համերաշխու-  
 րության ու ընկերասիրության («Երեք ընկեր»), ուսկը  
 կամքի («Մայրական սեր») և ծնողասիրության («Ծնողասեր  
 սղջիկը») ու այլ հարցեր: Սրանցից տարբեր են զվարճախ-  
 կամ կենդանական հերթափները, որոնք առավելապես հրա-  
 պորում են նախազարգացած հասակի երեխաներին: Սրանք  
 ունեն հակիրճ, սեղմ, աշխուժ պատմելուճ: Ահա «Աղբյուր»,  
 լուսնի և արեգակի մասին» հերթափը (1957), որտեղ հերթա-  
 փին հատուկ հնարաններով պարզվում է, թե ինչու է լուսինը  
 գիշերը, իսկ արեք ցերեկը լուսավորում, արջին էլ լուսարա-  
 ցին է կանուս:

Չափածո այս հերթափում օգտագործվում է երևույթի  
 շնչավորման հնարքը.

Չափի արջոր  
 Արեն ու լուսին  
 Բնակվում էին  
 Վաղոց միտքին:  
 Բնակվում էին  
 Երանք երկերում,  
 Ամպից կառուցված  
 Մի ապարանքում:  
 Մակայն լուսինը  
 Չար էր. կոճարար,  
 Աբրտի հեռ էր  
 Վեճում անզարդ:

Այնուհետև պարզվում է, որ լուսինը արջորին շարտում է  
 երկիր. սրա համար զայրացած արևը կարգադրում է լուսնին  
 ցերեկը շերտալ երկնքում և միայն իրենից հեռու շրջագայել:  
 Ինչ վերաբերում է արեգակ նորրը երախտագիտորեն հիշող  
 արջորին, սպա նա լուսնին լուսնեկու համար անմիջապես  
 րուն է մտնում և արևի շողի հետ ողջունում լուսատուին:

«Վարդուտ ոգնու հերթափ» հերթափները կենդանիներն են:  
 Ազգիս գերակ ողնուն պատվիրում է այնպիսի շար, որ երբ  
 (այդի, իրեն լճանալեն) Ոգնու ձգձգումից զայրացած աղվեսը  
 պղտանում է նրան ուտել, այդ պատճառով էլ ողնին՝

Վախենալով շար աղվեսից,  
 Չար աղվեսից ու մահվանից,  
 Հուզող սակ շարից վրան:  
 Որ աղվեսը շարի էրան:

Համանման են ուրիշի բնում ձու ածելու հատկությունը  
 պարզող «Կուսն» կամ շան ու մարդու մտերմությունը բացա-  
 ռությամբ «Թե ինչպես շունը մարդուն ընկեր դարձավ» հերթա-  
 փը: Անու մի հատված.

«Շատ ու շատ տարիներ առաջ շունը մեն-մենակ ապրում  
 էր անտառում: Որ շան մանակ մնաց, ձանձրացավ: Որտեղ  
 թի ընկեր գտնել, բայց այնպիսի ընկեր, որ աշխարհում բո-  
 ռությամբ ունեզը լինի»: Եունը ընկերանում է դալին, արջի, առու-  
 թի հետ, որոնք երկնչում են կամ մեկը մյուսից կամ մարդուց:  
 Ժամովվելով, որ մարդն էլ աճանազորեղը, շունը նրա մտերմն  
 է գտնում:

Այսպիսի հերթափները դրավիչ են, կառուցվածքով պարզ:  
 Փարթիկ հետաքրքրություններին ներդաշնակ այս հերթափ-  
 ները, Հայրապետյանի փոխադրությունների հետ, հարստաց-  
 րին հայ մանկագրությունը:

Նվազ կարևոր չէ թարգմանիչ Հայրապետյանի աշխա-  
 տանքը:

Իր սակզագործական կյանքի ընթացքում մեր մանկա-  
 կան գրականության վիճակով մտահոգված գրողը ցանկացել  
 է հայ մանուկին ծանոթացնել որս և արտասահմանյան լա-  
 վապույն մանկական ստեղծագործություններին, ուստի կա-  
 տարել է մի շարք փոխադրություններ և թարգմանություններ:  
 Արտասահմանյան արկածային գրականությունից ուշագրավ  
 են Ս. Ռասպինի «Մյունխենի արկածները», Ջոնասան  
 Սիլվիոյի «Գուլիվերը լիլիպուտների մոտ», Բ. Ատիվենսոնի

«Գանձերի կղզին» վիպակի, Յ. Կուպերի «Վերջին մոճիկանք» վեպի թարգմանությունները:

Որս զասական գրականությունից նա փոխադրել և թարգմանել է Կոխլովի՝ «Մուկն ու առնետը», «Կարապը, ձուկը և խնցղետինը», «Շունն ու ձին», «Փոռանը», նկրատովի «Մազայ պապը և նապաստակները», «Գարցոցականը», Լ. Տոլստոյի՝ «Գյուղացին ու վարունգը», «Փխսիկը», «Կատաղած շունը», Բիանկիի «Միտրիկներ», «Որտեղ են խնցղետինները ձմեռում», Չուկովսկու՝ «Գողացված արեգակը», «Արջն ու լուսինը», «Հերոսը», Մարչակի՝ «երգ շոգենավի մասին», «Միսոր Տվիսոր», «Հիմար մկնիկը», «Բեղավոր շերտավորը», Ա. Բարատի՝ «Մրոտ աղջիկը», «Ակնոցը», Մ. Բլյինի՝ «Բնչպես ավտոմոբիլը ման գալ սովորեց» և շատ ուրիշ ստեղծագործությունները:

Հայրապետ Հայրապետյանը իր ուժերը մինչև վերջ նվիրեց մանուկների մեջ բարին ու ազնիվը արմատավորելու վեճ գործին: Նա իր հաստատուն տեղը նվաճեց հայ մանկական գրականության մեջ, արժանացավ սերունդների ժամանակակից զանալու բռնորին տրված բարիտին:

Ս. Գ. ԱՄԱՆԵՅԱՆ

Ք Ա Ղ Վ Ա Մ Ք Ն Ե Ր

ՆՐԱ ՄԱՍԻՆ

Գու ամբողջ կես դար, անսպառ եռանդով, մանկական աշխույժով, սիրով և սրտով աշխատել ես բո հայ մանուկների թրթռոյան վեճ գործի համար, անձնվեր աշխատել ես խոսքով և գրքով, սերունդներ ես զաստիարակել, բարձրացրել նրանց հոգին և զարգացրել նրանց միտքը: Այսօր սովետական հասարակայնությունը, գնահատելով բառ արժանավունք կատարած նվիրական գործը հայտնում է իր խորին հարգանքը և շնորհակալությունը իր կուսուսուրյալի անխնայ մշակին, և հայ աշակերտությունն ու մանուկ սերունդը բերում է իր սերն ու խանդավառությունը իր նրախատվորին, իր բանաստեղծին, իր շատ սիրելի ուսուցչին:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հարգելի բնիկ. Հ. Հայրապետյան.  
Ինչպե՞ս եմ... բնզունեցեք իմ ամենազերմ ու սրտազին բարեմաղթությունները Ձեր 75-ամյակի առթիվ: Ես ձեզ միշտ հարգել եմ ու հարգում եմ իրրև մեր մանուկների սիրելի բանաստեղծի, իրրև բազմավաստակ գրողի:

Գ. ՍԱՐՅԱՆ (Գրական արիվ)

Մանկական գրող և բազմամյա մանկավարժ Հ. Հայրապետյանը ինքնատիպ է: Նա լավ է լսում մանուկների ձայնը, լավ է հասկանում փոքրիկների թրթռվ լեզուն: Գրա համար երա ոտանավորները շափազանց մատչելի են, պարզ գյուրթմունքի երևիտաների լայն մասսաների համար...

նա և ուսուցիչ է, և մանկավարժ գրող, և «Ալբրենհարտնի», «Ընկերացարանի» հմուտ կազմող, և մանուկների ամենօրյա սիրելիին, և քաղցր զրուցակիցը, և բնկերը:

Գ. ՐՅՐՅԱՆ (Ջահեյ ձերտնի)  
«Պրոնեք կանչ», 1935, Բ. № 1)

2. Հայրապետյանը մեր մանուկների սիրելի, մեր մանկական դրականության լավ կառուցողներից մեկն է:

ՍԵՄԵՆ (Սկրոնի պատանին,  
«Խորհրդային զորաց», 1935, № 47)

2. Հայրապետյանը իրեն երբանիկ համարելով ստում է, «Խորհրդային մանուկների մեջ ձերն իրեն ջահեյ է զգում»: Լավ մանկավարժը սովորեցնելով երիտանրին, միաժամանակ սովորում է նրանցից: ...նա հաճախ խոսում է այն մասին, որ ինքը շատ բան է սովորել և դեռ շարունակում է սովորել: Դեր նշանավոր գրողներից՝ Քումանյանից, Աղայանից, Աթաբեկ Նեկոյանից: Նա այսպես է գնահատել նրանց և իրեն.

Հովհաննեսին (Քումանյան) ծափ ու պատիվ, մրցիք, գանձեր էլի բիշ է,

Ղազարոսին (Աղայան) խորին հարգանք, հեքիաթային մի աշխարհ տանք, էլի բիշ է,

Նեկո-Ապր (Աթաբեկ Նեկոյան) ոսկե սափոր:

Իսկ Հայրույն (2. Հայրապետյան) մանուկների բարեկամի անունը որ տան, ամեն ինչ է:

Ա. ՄԻՎՍՅԱՆ (Մանուկների բարեկամը  
«Խորհրդային զորաց», 1936, № 45)

Իմ մանկադին բարեկամ,  
Շաք սիրելի եմ մանկուց  
Սրբ եղև եմ երեխա,  
Սեսել ես դու իմ հոգուց:  
Հայրենիքում իմ ազատ,  
Պրի սուկ բախտավոր,  
Հիմա տղա է զվարթ,  
Պրոբովում քո խոսքը նոր:

Ձրմանասուն հինգ տարի  
Պյանի համփուս անցել,  
Քայց ձերության համար դու  
Փամանակ շեռ ունեցել:  
Ձանկանում եմ, որ ապրես  
Հայրույր տարուց ավելի,  
Քայց միշտ մնա ձայտերես  
Մանուկների սիրելի:

ՍԱՐՄՆԸ (2. Հայրապետյանին, «Գրական թերթ»,  
1930, № 8),

Արեգադր բանաստեղծը սրտի անթիվ մեղերով կապված էր մայր Հայրենիքին, անհունորեն սիրում էր նրա բարձրագույն լինելը, ծաղկաշատ դաշտերը, փրփրադեղ գետերը և փրփրավոր անտառները: Հայրենասեր բանաստեղծը հիանում է Հայրենի բնության անկրկնելի գեղեցկություններով:

2. Սեվան (Գեղեցիկ նվեր մանուկներին,  
«Պրոնեք կանչ», 1931, № 9)

Սիրախ եմ, որ հասարակական կյանքիդ փշոտ ուղին պատկվում է դափնիներով: Միայն խորհրդային իրավահարգամ հայ ուսուցիչը, հայ մտավորականը գտավ իր արժանի քանահասականը: Փառք ու պատիվ այդ իրավահարգին ու այդ իրավահարգը հաստատող հեռու գործիչներին:

Ափոստ, հազար ափսոս, որ մի 40—50 տարի հետո շենք ձեկիլ: ... Ջերմադին սեղմում եմ ձեռքդ ու սրտանց շնորհավորում այսօրվա օրը:

ՋԱՎԱԿԵՅԻՍ Կամակից (Գրական արեթիվ)

Հայրապետյանի թարգմանությունները արժեքավոր են: Գրում են մեր մանկական դրականության մեջ:

Հիանալի է թարգմանված Հայրապետյանի կողմից Մարյակի «Հիմար մկնիկը». պարզությունը, մատչելիությունը, բանաստեղծական շափի ճշգրիտ պահպանումը, հայերեն լիզվով հրատարակված այս գիրքը դարձնում են իսկական մի լավագույն սանեղագործություն: Այնտեղ պահպանված է մարշակյան ոճի ողջ սրանելիությունը:

Գ. ՋԱՆՅԱՆ,  
«Коммунист», 1936, № 59.

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԲԱՊԵՏՏԱՆԻ ԵՐԿԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ  
ա) ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱՅՈՒՆԵՐԸ

1 9 3 9

Ի ԽՄ երգերը: (Բանաստեղծություններ: Հեքիաթներ և  
սուտակներ: Թարգմանություններ): Նկ. Մ. Բաղդասարյանի,  
Առաջարանը Ա. Ինճիկյանի: Ե., Պետհրատ, ՀԿԵՄ ԿԿ կից,  
մասնկապատ. գրահ. բաժին, 1939, էջ:

Ք ո վ ա ն դ.: Բանաստեղծություններ: Անցան.— Պապա-  
մուսու:— Ինչ սիրուն է:— Մաղիկները:— Գարուն:— Միտն ու  
տղան:— Գարնանացան:— Սարյակի տունը:— Մառատունկ:—  
Գարուն:— Մայիսը:— Պատկեր:— Ուտենու հյուրերը:— Մի-  
տիկին:— Արտուտիկ:— Գիշեր:— Առավոտ:— Սիրուն զիշեր:  
— Աշուն:— Գեղի աշխատանք:— Շուկան աշանը:— Աշնան  
տերեր:— Միտն ու ծիծեռնակը:— Աշնան երգ:— Աշուն:— Ձմեռ:  
— Ձմեռ:— Մարտի օրում:— Նոր տարվա նվերը:— Մեր սո-  
նածառը:— Տոնածառ:— Արշի բունը:— Եղևին:— Ձմռան  
վերը:— Չորս հղանակ:— Բրիգադիր:— Հիվանդ փոսիկը:—  
Առավոտնակը:— Հանկուկ:— Ճանճը:— Անտառը:— Հյուսնո-  
ցում:— Փոսիկի դասը:— Շոֆեր:— Բամբակազուրիչ գործա-  
բանում:— Կենդանիներ:— Թռչուններ:— Երեք փոսիկների  
պատմությունը:— Հատիկի նամակը:— Կոխոզի համար:  
Մեղունների կոմունան:— Մեր գետը:— Ուրախ Հրալը և սա-  
զի սալը:— Չարդարենք:— Հոկտեմբեր:— Լենին պարիս:—  
Իլիի աշիկները:— Լենինի մատին:— Բանակը կարմիր:  
Այն ո՞վ է:— Տատիկն ու Թոռիկը:— Մայիս:— Քսանվեցի  
երգը:— Հեթմակները ԵՎ ԱՌԱՎՆԵՐ: Խանն ու հովիվը:— Գի-  
տուններն ու առյուծը:— Խորամանկ աղբատները:— Ճաստի-  
ծիտիկը:— արված ծիտիկը:— Գելը հարկահան:— Ուղտն  
ու էջը:— ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Բրբլկան, Զինբլկան, Նի-  
նբլկան:— Պալիկ Մորոզով: [Մ. Գորոշին]:— Միօքիկներ  
լվ. Բիանկի]:— Հիմար մկնիկը [Ս. Մարշակ]:— Մրոտ աղ-

շիկը [Ա. Քարոտ]:— Գողացված արեղակը [Կ. Չուկովսկի]:  
 — Միտր Տվիտարը [Ս. Մարշակ]:— Արբն ու լուսինը [Կ.  
 Չուկովսկի]:— Մուկն ու աննետը [Բ. Կոխլովի]:— Կաշաղակն  
 ու աղաավը [Բ. Կոխլովի]:— Ամենալավ կրկնը:— Յոտանը  
 [Բ. Կոխլովի]:— Կարապը, ձուկը և խեցեղետները [Բ. Կոխ-  
 լովի]:— Շունն ու ձին [Բ. Կոխլովի]:



ԼՍՊՍՍՍՍԿԸ ու ԱՂԼԸ

1948

2 փնջիկ (Բանաստեղծությունները Կրտսեր տարիքի  
 համար): Եկ.՝ Ա. Ղարիբյանի: Ն., Հայպետհրատ, ՀԿԵՄ ԿԿ  
 մանկագրատ. գրակ. բաժին, 1948, 4 էջ, եկ.:

Թ ո Վ ա ն զ.՝ Լենին պապին:— Ստալինը մեր:— Գերա-  
 վանց սովորները: ԲնՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, Անցան:— Չնծաղիկ:—  
 Չղան և ձեղուն:— Ճանճը:— Գիշերը:— Մեր գետը:— Օգնում  
 ենք:— Աշուն:— Միտն ու ծիծեռնակը:— Առաջին փաթիլնե-  
 րը:— Միտիկը:— Եղենին:— Տոնածառի երգ:— Նոր տարվա  
 եկներ:— Վերջին փաթիլները:— Չորս եղանակ:— Օրոր:  
 ԱՍՍԿԵՆԵՐ, Շունն ու ձին:— Կոտնիկը և ազգը:— Կաշաղակն ու  
 աղաավը:— Երեք փխիկների պատմությունը:— Հզարտ ար-  
 յորը:

1951

3 ԻՄ կրկնը: Իմ հայրենիքը, բնօրջան կրկնը (բանաս-  
 տեղծություններ, գրեմներ, հերթախմբեր: Առական: Ավան-  
 գություններ: Բարգամունություններ): Եկ.՝ Ա. Չորբաբյանի: Ն.,  
 Հայպետհրատ, ՀԿԵՄ ԿԿ կից մանկագրատ. գրակ. բաժին,  
 1951, 158 էջ, դիմանկ:

Թ ո Վ ա ն զ.՝ Իմ հայրենիքը, Լենին պապին:— Լենինին:  
 — Իլիշի աշիկները:— Ստալինին:— Ստալինը մեր:— Գերա-  
 վանց սովորները:— Քանակից կրկնը:— Ողջուն Քանակիցին:—  
 Իմ հայրենիքը: ԲնՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, Անցան...— Գարնան կրգ:  
 — Գարուն:— Ինչ սիրուն է:— Մոռատունկ:— Ալյու:— Չնծա-  
 ղիկ:— Գարնանցան:— Մայիս:— Արտուտիկ:— Գիշերը:  
 Ճանճը:— Ուտնու հյուրերը:— Արբը:— Ճանաչում էր մեզ:  
 — Ի՞նչ թռչուններ են:— Ճամբարի առավոտը:— Բամբակի  
 գալառում:— Տղան ու ձեղուն:— Մեր գետը:— Առաջին  
 կշան տները:— Չորս եղանակ:— Հրամեջտ:— Երգ Սեանի  
 մասին:— Օրոր:— Գեպի աշխատանք:— Առաջին գաթը:  
 Աշուն:— Միտն ու ծիծեռնակը:— Աշունն էմ սիրում:— Աշնան  
 երգ:— Շուկան աշնանը:— Օգնում ենք:— Առաջին փաթիլնե-  
 րը:— Չմեռ:— Չլուրը:— Մարտը օդում:— Եղենին:— Տոնա-  
 ծառի երգ:— Նոր տարվա եկներ:— Միտիկը:— Մայրիկների  
 մասին:— Վերջին փաթիլները:— Երեք փխիկների պատմու-  
 լությունը: ՊՈՆԵՆԵՐ, Մեղունների կոմունան:— Կոխլովի հա-  
 մար:— Համաթիկ նամակը:— Երգ պիտների մասին:— Կաս-  
 ժար:

այա Կրավչուկի։— Փոքրիկ պոեմ փոքրիկ Շուրաչի մասին։—  
Կապավորը։— Կոմերիտուհի Քամարան։ ԷնթիԱՔՆԵՐ, Ա.  
ԲԱԿՆԵՐ, ԱվԱնԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Գեպի արևը։— Ուղտն ու  
էջը։— Ամենալավ երգիչը։— Շունն ու ձին։— Կոտնկն ու սա-  
ղը։— Կապաղահն ու աղառվը։— Հայտատ արևոցը։— Խիզախ  
լեռնացին։ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Մրտտ աղբիկը [Ս. Բար-  
սոյ]։— Գողացված արեգակը [Կ. Չուկովսկի]։— Արջն ու լու-  
սինը [Կ. Չուկովսկի]։— Հիմար մկնիկը [Ս. Մարշակ]։

1957

4 ԸՆՏԻՐ երկեր։ Կ. Կաթոյանի։ Ե., Հայպետհրատ,  
1957, 254 էջ։

Բ ո Վ ա ն ր.՝ ՌՄ ՀԱՅՐՆՆԵՐԸ։— Լենին պապին։— Լենի-  
նին։— Լենինի ծնունդը։— Իլիշը։— Մարտիկ առաջնորդը։—  
Իլիշի աշիկները։— Քսանվեցի երգը։— Ողջույն բանակին։—  
Իմ հայրենիքը։— Երգ Սեանի մասին։— Ճամբարային։—  
Հրածեղտ։— Գեպի աշխատանք։— Առաջին դասը։— Մեր  
ցանկությունը։— Մայրիկների մասին։ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ.  
Անցան։— Չնծաղիկ։— Մարյակի տունը։— Ալու։— Գարնան  
երգը։— Գարուն։— Սաղիկները։— Ինչ անուշ է։— Առվալին ու  
մանուշակը։— Մտախոսուկ։— Մախի։— Տղան ու մեղուն։—  
Սիրուն գիշեր։— Պատկեր։— Միտիկին։— Արտատիկ։— Գի-  
շեր։— Առավոտ։— Ուռնու հյուրերը։— Արբը։— Ճանաչում  
և բ մեզ։— Ի՞նչ թռչուններ են։— Ճամբարի առավոտը։— Մեր  
գետը։— Անաստը։— Բամբակի դաշտում։— Սովափին։—  
Ճանճը։— Օրոր։— Աշուն։— Աշնան երգ։— Անգին աշուն։—  
Աշունն եմ սիրում։— Աշնան տերևը։— Միտն ու ծիծեռնակը։—  
— Շուկան աշնանը։— Օգնում են։— Առաջին փաթիկները։—  
Չմեռ։— Չլուր։— Եղևին։— Մարտի օդում։— Տոնածաղը։—  
Հյուրը։— Նոր տարվա նվերը։— Մեր կիլիկ։— Միտիկը։—  
— Գրչին փաթիկները։— Պապածուռ։— Չորս եղանակ։— Երեք  
փսիկի պատմությունը։— Գուրգենիկը, Արան ու Ես։

1961


ՍԱԼԻՍՆԵՐ, Մեղունների կոմունան։— Անձվեր պատանին։—  
Կոտնկերի մասին։— Կաստյա Կրավչուկի։— Փոքրիկ պոեմ  
փոքրիկ Շուրաչի մասին։— Կապավորը։— Կոմերիտուհի Քա-  
մարան։— Գալլ Վահան։— Ուրախ Հայրը և սաղի սալը։—  
ԻՐԱՄՈՒՆԵՐ, ԱՒԱԿՆԵՐ, ԱվԱնԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Մարյական  
էջը։— Անհասարկ ուղիկը։— Ուզան ու էջը։— Գալլը հար-  
սոյ։— ԿԿան։— Հարուստն ու բարտարիկը։— Կարճն ու եր-  
կարը։— Ամենալավ երգիչը։— Մունն ու անունը։— Կոտնկն  
կարգը։— Հայտատ արևոցը։— Պատված կուպակը։— Խիզախ  
լեռնացին։— Երեք բնիկը։— Միտն ու մեղուն։— Արեգակի սա-  
նազանի արջիկը։— Իշի օգնությունը։ ԹԱՐԳՄԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐ, Գենիալ Տոպտիկներ [Ն. Նեկրասով]։— Մազայ  
հեղափոխությունը [Ն. Նեկրասով]։— Բեղավոր-շեր-  
տավոր [Ս. Մարշակ]։— Միտը Տվխտը— [Ս. Մարշակ]։—  
Իմար մկնիկը [Ս. Մարշակ]։— Գողացված արեգակը [Կ.  
